## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿԻ Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Հասցե՝ ք. Ճամբարակ, փ. Ե.Չարենց/1
Հեռ. / +374/9160-38-87
E-mail tchambarak3@schools.am
25 ապրիլ 2023թ.
N 25/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Ինֆորմատիկա» առարկայի՝ 4/չորս/ դասաժամի ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվել է մրցույթ:

Ուսուցչի թափուր տեղը համալրելու համար մրցույթը տեղի կունենա 2023 թվականի մայիսի16-ին՝ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոցում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :

Առդիր մեկ էջ:

Տնօրեն՝ Digitally signed by GRIGORYAN KARINE 5210610357 Date: 2023.04.26 Կ.Գրիգորյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ինֆորմատիկա (4 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),

2. մեկ լուսանկար 3x4 չափի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից՝ 25.04.2023թ. մինչև 2023 թվականի **մայիսի 10-ը** / ներառյալ/ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենան **մայիսի 16-ին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցում** ժամը 14:00-ին:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 091-60-38-87 հեռախոսահամարով: